



Օգտագործման պայմանները եւ կարգը

Ցանկ

Օգտագործման պայմանները եւ կարգը.....	2
ՀՎՀ-ի հեղինակային իրավունքը և սահմանափակ լիցենզիա	2
Ինտերակտիվ գործիքներ, ուսման բովանդակություն և վարքագիծ	3
Ինքնություն և անձնական տվյալներ	4



ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

Հայկական վիրտուալ համալսարանը հանդիսանում է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) սեփականությունը: Հայկական վիրտուալ համալսարանի կայքի՝ www.avc-agbu.org, պարունակությունը, ներառյալ չսահմանափակված Հայկական վիրտուալ համալսարանի լոգոն, էսքիզները, տեքստերը, գրաֆիկները, նկարները, տեղեկատվությունը, տվյալները, ծրագրակազմը, ուսուցման ծրագրակազմը, փաստաթղթերը, տեխնոլոգիաները և այլ թղթապանակները պատկանում են ՀԲԸՄ –ին հեղինակային իրավունքով ու հանդիսանում են նրա սեփականությունը և պաշտպանվում են միջազգային հեղինակային իրավունքով և այլ օրենքներով:

Դառնալով Հայկական վիրտուալ համալսարանի ուսանող՝ Դուք ձեռք եք բերում հնարավորություն և իրավունք մուտք գործել և օգտվել Հայկական Վիրտուալ Համալսարանի ուսուցման ծրագրակազմից, սովորելու կառավարման համակարգից և ուսուցման ծառայություններից (հետագայում միասին՝ Դասընթացի նյութեր և ծառայություններ), որը հասնելի կլինի www.avc-agbu.org կայքում: Կայքից օգտվելու պայմանները կիրառվում են Հայկական Վիրտուալ Համալսարանի Դասընթացի նյութեր և ծառայություններ մուտք գործելու և դրանցից օգտվելու համար:

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ՕԳՏՎԵԼՈՒ ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ, ՔԱՆԻ ՈՐ ԴՐԱՆՔ ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ ՁԵՐ ՕՐԻՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ: ԴԱՌՆԱԼՈՎ ՈՒՄԱՆՈՂ ԴՈՒՔ ՕՐԻՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԵՔ ԿՆՔՈՒՄ ՀԱՅՎԱԿԱՆ ՎԻՐՏՈՒԱԼ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆՈՒՄ ԵՔ ՀԵՏԵՎԵԼ ՈՒ ՊԱՀՊԱՆԵԼ ՍՈՒՅՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԻԸ ԵՎ ԿԱՐԳԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԿԱՅԱԿՈՉՎԱԾ ԲՈԼՈՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ: ԵԹԵ ԴՈՒՔ ՀԱՄԱԶԱՅՆ ՉԵՔ ԲՈԼՈՐ ԱՅՍ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ, ԱՊԱ ՄԻ ԳՐԱՆՑՎԵՔ ՀԱՅՎԱԿԱՆ ՎԻՐՏՈՒԱԼ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ:

ՀՎՀ-ի հեղինակային իրավունքը և սահմանափակ լիցենզիա

Որպես ՀՎՀ-ի ուսանող Դուք ձեռք եք բերում սահմանափակ լիցենզիա, առանց ենթալիցենզավորման իրավունքի, մուտք գործել և օգտվել Դասընթացի նյութերից ու ծառայություններից միայն Ձեր կրթական, ոչ առևտրային և անձնական օգտագործման համար: Դառնալով ՀՎՀ-ի ուսանող Դուք հատկապես համաձայնում եք:

- չվերարտադրել, չվերավաճառել, չվարձակալել, չփոխանցել կամ կոմերցիոն նպատակներով չօգտագործել Դասընթացի նյութերը և ծառայությունները,
- չբաշխել Դասընթացի նյութերը և ծառայությունները,
- հրապարակայնորեն չցուցադրել Դասընթացի նյութերը և ծառայությունները,
- չստեղծել ածանցյալ ստեղծագործություններ՝ ուսուցման ծրագրակազմի հիման վրա, ներառյալ, բայց չսահմանափակված՝ Դասընթացի նյութերի և ծառայությունների փոփոխություն, վերամշակում և թարգմանություն,
- չստեղծել կամ չփորձել ստեղծել փոխարինող նյութ կամ նման արտադրանք կամ ծառայություն՝ Դասընթացի նյութերի և ծառայությունների միջոցով:

Դասընթացի նյութերի և ծառայությունների սույնով չթույլատրված ցանկացած օգագործման կամ օգագործման փորձի դեպքում ՀՎՀ-ն իր սեփական հայեցողությամբ կդադարեցնի ուսանողի մուտքը և օգտվելը Դասընթացի նյութերից և ծառայություններից: Տույժերի և պատժի այլ ձևերը կկիրառվեն ՀՎՀ-ի սեփական հայեցողությամբ:

Ինտերակտիվ գործիքներ, ուսման բովանդակություն և վարքագիծ

Դառնալով ՀՎՀ ուսանող՝ Դուք ձեռք եք բերում ինտերակտիվ գործիքներից, ներառյալ՝ ֆորումներ, չաթի սենյակներ և հաղորդագրությունների վահանակ (այսուհետ՝ Ինտերակտիվ գործիքներ) անսահմանափակ օգտվելու հնարավորություն: Դուք նաև անսահմանափակ մուտք կարող եք ունենալ Ձեր և այլ ուսանողների կողմից ստեղծված տարածքներ, բեռնավորել և կուտակել հաղորդագրություններ, տեքստեր, սվյալներ, տեղեկատվություն, գրաֆիկներ, նկարներ, ձայնագրություններ/տեսագրություններ (հետագայում միասին՝ Ուսման բովանդակություն):

Բացառապես Դուք եք պատասխանատու Ինտերակտիվ գործիքներից օգտվելու համար և հասկանում եք, որ Ձեր կողմից բեռնավորված և տեղադրված Ուսման բովանդակությունը կարող է հասանելի լինել նաև ուրիշների համար: ՀՎՀ-ն պատասխանատվություն չի կրում Ձեր կամ այլ ուսանողների կողմից Ինտերակտիվ գործիքների միջոցով Ուսման բովանդակությունը հասանելի դարձնելու համար: ՀՎՀ-ն պարտավորություն չի կրում Ուսման բովանդակությունը ստուգելու և վերահսկելու համար: Այնուամենայնիվ, ՀՎՀ-ն իրավասու է ցանկացած ժամանակ Ուսման բովանդակությունը որևէ պատճառով կամ առանց պատճառի արգելափակել կամ հանել կայքից՝ նախապես ծանուցելով և բացատրություն տալով կամ առանց նախապես ծանուցման և բացատրության:

Տեղադրելով կամ բեռնավորելով Ուսման բովանդակությունը Ինտերակտիվ գործիքների միջոցով Դուք ՀՎՀ-ին տալիս եք ոչ բացառիկ և հեղինակային վարձատրություն չպահանջող իրավունք օգտագործել, վերարտադրել, հրապարակել, թարգմանել, փոփոխել և ստեղծել ածանցյալ ստեղծագործություններ դրանից: Դուք համաձայն եք, որ Ձեր կողմից Ինտերակտիվ գործիքների միջոցով հասանելի դարձրած ցանկացած Ուսման բովանդակություն գաղտնի չէ: ՀՎՀ-ն իրավասու կլինի ցանկացած նպատակով Ուսման բովանդակության անսահմանափակ օգտագործման և տարածման համար, ներառյալ առևտրային, առանց Ձեզ տեղեկացնելու կամ փոխհատուցելու:

Դուք համաձայն չեք օգտագործել ինտերակտիվ գործիքները ստորև նշված նպատակներով՝

- Առևտրային, ներառյալ առանց սահմանափակման՝ քաղաքական քարոզարշավների, գովազդների և միջտորությունների կամ այլ ուսանողների էլեկտրոնային հասցեների՝ ոչ ցանկալի էլեկտրոնային նամակներ ուղարկելու նպատակով ձեռք բերման;
- Բեռնավորելու, տեղադրելու կամ տարածելու ցանկացած Ուսման բովանդակություն, որը կարող է խախտել ցանկացած կողմի հեղինակային իրավունքները, արտոնագրային իրավունքները, ապրանքային նշանի կամ այլ մտավոր սեփականության կամ գույքային իրավունքը;



- Բեռնավորելու, տեղադրելու կամ տարածելու անօրինական, անպարկեշտ, պորնոգրաֆիկ, անվայել, սպառնական, վիրավորական և անձնական կյանք ներխուժող Ուսման բովանդակություն;
- Բեռնավորելու, տեղադրելու կամ տարածելու վիրուսներ, վնասակար և կործանարար թղթապանակներ (files)
- Բեռնավորելու, տեղադրելու կամ տարածելու Ուսման բովանդակություն, որը կառաջարկի, կառաջացնի կամ կդրդի քրեորեն պատժելի արարքի:

Ի լրումն, որպես ուսանող Դուք պատասխանատու եք Ձեր հավասարակիցների և օնլայն ուսուցիչների նկատմամբ հարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար ինչպես նշված է Ուսանողների ուղեցույցում:

Վերոնշյալ քաղաքականությունների խախտումները կամ խախտում ենթադրող վարքագծերը կարող են առաջացնել պատժամիջոցներ ՀՎՀ-ի սեփական հայեցողությամբ, ինչպես նաև կարող են առաջացնել նման զանցանքից բխող ցանկացած այլ հետևանք, պատասխանատվություններ և տույժեր:

Ինքնություն և անձնական տվյալներ

Օգտվելով Դասընթացի նյութերից և ծառայություններից Դուք համաձայն եք՝

- Տրամադրել ճշգրիտ և լիարժեք տեղեկատվություն Ձեր և Ձեր ինքնության մասին թե գրանցման դիմումը լրացնելիս, և թե ՀՎՀ-ի և Ձեր դասընկերների հետ շփման մեջ;
- արագորեն նորացնել Ձեր և Ձեր ինքնության մասին ցանկացած տեղեկատվություն;
- Բացառապես պատասխանատու լինել Ձեր հաշվի, ներառյալ կայք մուտք գործելու և ծածկագրի անվտանգության համար:

Դասընթացի նյութերից և ծառայություններից օգտվելու համար Դուք պետք է լինեք չափահաս պայմանագիր կնքելու համար: Դուք հասկանում եք, որ եթե անչափահաս եք, ապա պայմանագիր կնքելու համար Ձեր ծնողն է լրացնում գրանցման դիմումը և ստորագրում այն Ձեր փոխարեն: